

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԲԱՐՈՑԵԱՆ, ՈՒՍՈՒՄՆԵԱՆ, ԱՐՈՒՆՍՏԻՏԵԱՆ

Նր հրատարակողի ահեմ ամաց սկիզբը:
Բաժանորդութեան գինն է կամիկի վճարելի՝ Տա-
րեկան 8 ֆրանք. — Վեցամեայ՝ 5 ֆրանք: —
Մէկ թիւ առանձին՝ կը վճարուի 1 ֆրանքի:
Խմբագրութեան կենդրոնակայանն է Վիեննա. Մի-
թարեան Միաբանութեան Մայր վանքը:

Արեւելք՝ ի Կոստանդնուպոլսու նա ի Զմիռնիս՝ նոյն
Միաբանութեան վճարողներին կ'ընդո-
նուի առանց ծախքի ծախսոց:
Արեւելքի ուրիշ քաղաքներուն համայն՝ յիշեալ վա-
ճարողներին կը սկսի ծախքի ծախքը հաշուի:
Ժամանցունքն առանձին սակարկութեամբ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ




Տերեր իրար կը յաջորդեն, բայց իրարու չեն նմանիր,, կ'ըսէ առածը: Նոյնն
ըսել հարկ է մարդկային գործոց համար, յաւելլով նաեւ՝ թէ ըստ իմիջ
հարկ է մանասանդ՝ այն Փոփոխութիւնն ըստ ժամանակի, կամ՝ “գործ
իմաստութեանն է,, ըստ Լատին իմաստնոյն: Սակայն դիտող ու խորհող ընկե-
րութեան մէջ, ուր մարդս կը շարժի, նոյն ազատ փոփոխութիւնը ազատ չեն շատ
մը դիտողութիւններէ եւ խորհրդածութիւններէ՝ ուր յաջմէ եւ յարեկէ կ'ելլեն
անոնց առջեւ, ի նպաստ կամ՝ յընդդէմս, — ըստ որում՝ անուամբ նոր քայլերն
ի լայն կամ՝ ի յոռին ուղղուած ըլլան:

Յարատեւ գործել ժամանակին պահանջած փոփոխմամբ՝ — աւասիկ Յա-
ռաջադիմութիւն: Գործն ու յառաջադիմութիւնը դիտել, դատել, եւ խորհրդածել
— աւասիկ յառաջադիմութեան Ղեակը: Երկուքն ալ ճշմարիտ մարդկային գործ՝
այսինքն մարդու արժանի:

Հրապարակական թերթեր (օրագիրք եւ լրագիրք), պաշտօն առած են թէ՛
մէկն եւ թէ՛ միւսն ի հրապարակ հանել, ոչ ի յագուրդ հետաքրքրութեան միայն,
այլ մանաւանդ ի խրատ, յուղղութիւն եւ ի զգուշութիւն: Նա թէ՛ հրապարակական
թերթերու գործն եղած է ինքնին խորհրդածել ու դատել աշխարհի վրայ եւ
խարհի առջեւ. որով ոչ միայն լրբեր՝ այլ եւ լրտես, այլ եւ դատաւոր կը հան-
դիսանան մարդկային գործոց ու խորհրդոց յառաջադէմ կամ՝ յետախաղաց շարժ-
ման, եւայլն: Եթէ այս դիտողութիւնը լռէին, եթէ գործն ու խօսքն իրենց առած
փոփոխութեամբն ի հրապարակ չելլէին, քանիներու համարձակ կ'ըլլար թիւր
գործել եւ թիւր ուսուցանել: — Եւ այս է օրագրի մ'իսկական նշանակութիւնը:

Բայց ճիշդ այստեղս է հանգուցին զուլիւր. այս իսկ է էական եւ կենսա-
կան ինդիքը՝ հաւարակութեան համար. տեսնել թէ՛ արդեօք լուր թէ՛ չար ծա-
ռայութիւն կ'ընեն, կ'ուղղեն թէ՛ կը մուրեցընեն այն ատենակալներն, այն առա-
ջորդները, — * ի շինմ թէ՛ ի քակել, կեցած են: — Այս պարագան անտարբեր քան



չէ ընթերցողաց համար: Թերթ մը՝ որչափ սիրուն դիմօք ալ ներկայանայ իւր ընթերցողաց, որչափ ծանրակշիռ ըստ նիւթայն ըլլայ եւ յանկուցիչ ըստ կերպին, բանի երբինազեղ պէտպիտութեամբ ալ շողողայ, կարելի է թէ յայտ՝ կամ՝ յայտ՝ գլխոյ դատապարտելի ըլլայ յիշեալ դեկալորութեան պաշտօնին մէջ, թէ՛ եւ շատերուն ռամկական համարումն ու համակրութիւնը վայելէ՝ մինչեւ որ զնոյն համարումն ու զբաղքը համակրութիւնն անոնց ի վերջոյ դառնապէս քաւել տայ օր մ'իցենց ծանր տուժիք: Ըստ այսմ'՝ արդիւնաւոր կամ՝ պարտաւոր է հրապարակական թերթն իւր սկզբանցն ողջ կամ՝ փուտ, ուսմանցն եւ ուսումնասիրութեանցը հիմնական կամ՝ հարեւանցի ըլլալուն, եւ վերջապէս տեսանելիաց առջին սփռած լուսոյն հանդարտ-յստակ կամ՝ շրջացուցիչ-սղտոր ըլլալուն համեմատ, — եթէ՛ մտաւորական, եւ եթէ՛ մանաւանդ դաստիարակական ու քարոյական մասին, որն ալ որ եղած ըլլայ թերթին վախճանն ու յառաջադրեալ նպատակը: — Եւ այս է օրագրի մ'իսկական արժէքը:

Աստիկ մեր Ամսօրեայ Բաւոյնի հրապարակական դասանութիւնն, ինչպէս որ սովոր է ամէն թերթ յասպարէզ ելած օրէն տալ հասարակութեան. այսինքն յիշեալ ճշմարիտ տեսակէտնն դիտել, բմբռնել եւ բմբռնել տալ իրերը:

Յամծնեցիւր ժամանակին պահանջմունքը յարգել: Այո. Վիննայի Միխիթարեան Միաբանութիւնն ալ չէր կրնար ժամանակի պահանջմունցն առջեւ անտարբեր կենալ՝ այնպիսի ատեն մ'որ առ հասարակ զարգացման փութոյն ընդհանրանալուն նետ ընթերցանութեան ալ սէքն օրըստօրէ՛ յաճախած՝ պէտպէս եւ նորանոր ծարակ կը փնտռէ՛: Ալ չէինք կրնար ընդ երկար խուլ մնալ ինչպէս մեր ներքին զգացման թելադրութեանը, նոյնպէս եւս ամէն կողմէն հասած քաջալերիչ յորդորներուն: Եւ իրօք՝ գովելի կերպով մը յուզեալ արդի ընթերցաւոր ժամանակիս իրաւացի ինդիքներէն է՝ որ ծայն մ'ալ անկնայ ազգային իմացական ներդաշնակութեան մէջ: Եւ ան այսօր ինդաւիտ ձեռնարկու կ'ըլլանք տոյն շրջանաւոր կամ՝ պարբերական հրատարակութեանս, որն որ՝ մինչ համեստ կերպարանօրն յողջոյն կը մատչի Ազգին, քաջայոյս ենք թէ սիրով պիտի դիմաւորուի ընդհանրութենէն, եւ եղբայրական աջօք նկատուի քաղմանթիւ պաշտօնակից թերթերէն՝ իրքեւ միւս եւս գործակից եւ ձեռնտուն՝ Ազգին մտաւոր եւ քարոյական հարստութիւնն յաճախելու:

Հանդիսի ճակատը Բարոյական, Ռառաքմանական, Արաքաւորագիտական քառերն ըստ բաւականի քացատրիչ են, եւ պէտք չեն թողոր մանրամասն խոստաքանութեանց՝ որոնք այս կարգի գրաւոր գործոց յայտարարութեանցն կամ՝ յառաջաքաններուն սովորական են:

ԱՐԱՌՅԱՆԻՆ մասին կը վերաբերի բնականապէս նաեւ Դաստիարակական (pédagogique), որուն կից են Դպրոցական վարչաթիւնն կամ՝ միթողներու ընտրութիւնն ու քարեփոխութիւնները, եւայլն. եւ մենք ուրախութեամբ կը տեսնենք որ այս մասին քաւական յարգ եւ կարեւորութիւն տրուած է վեր-

¹ Յայտնի է թէ Վիննայի Միխիթարեան Միաբանութեան աշխատասիրութեամբ ատեն մ'իւրած "Եւրոպա", անուն թերթը՝ նախ իրքեւ քաղաքական դասագիր. եւ յետոյ (— երբ հետազոյց յաճախութեան նկատմանեայ համար տեւորը կ'ընէր այն "Շարախական լրերը..") — իրքեւ "Ընտանեկան օրագիր.. կեր-

պարանափոխ եղած կը հրատարակուէր առ ի փորձ. սակայն փորձը վայցեց՝ թէ դժոխ տոյն ատեն ընթերցասիրութեան վիճակը հիմնականն տարբեր, եւ ընդհանրապէս ժամանակներն գործոյն նպատաւոր չըլլալուն՝ արդէ վերջապէս որ դադարէ. ինչպէս իրօք եղաւ:

չին ժամանակներս: Նոյն վախճանին կը դիտենք ծառայեցընել նաեւ ՆորաՎեպ, ՄանրաՎեպ (nouvelles, anecdotes), եւայն զուարճալիքը:

ՌԻՍՈՒՄԵԱԿԱՆԵՆ է առաւելաւ գիտնական աշխարհի ճշդագոյն հետազօտութեանց եւ նորագոյն տեսութեանց արդիւնքն եւ ազգային կամ օտարազգի գիտնական եւ քանասիրական երկասիրութիւնները նաղորդել, կամ՝ իրեւէ գրաւոր զործոյ յարգն ու արժէքը ծանօթացընել. — որ մասը սովորութիւն է Մասնագրական (bibliographie) կոչել:

ԱՐՈՒՆՍՏԳԻՏԱԿԱՆ եւ անոր յարակից Տնտեսական (industrie, économie) ծիւղին վերաբերեալներն են գլխաւորաբար մարդկային մարտաբնութեան վերջին (նորագոյն) կատարելագործութեանց գիտելը կամ՝ փորձերը:

Առաջիկայ Թերթի քաղաքական լրագիր շրջալով կը շատանայ ամէն անգամուն վերջին քաղաքական դիպաց եւ ընդհանուր քաղաքականութեան ներկայ դիրքն ի հանդէս հանել Ամսօրեայ քաղաքական տեսութիւն մը տալով իւրաքանչիւր թուոյն վերջը:

Այս է շրջանն որուն մէջ կը յաճի առաջիկայ պարբերական հրատարակութիւնս. որուն զոյնն ու նկարագիրն արդէն յայտնի է վերագոյն եղած ակնարկութիւններէն:

Հանդէսս, ինչպէս անունը կը յայտնէ, ամսական է, 16 երեսէ քաղկացեալ. ամէն ամիս մէկ Թիւ ելլելով:

Բաժանորդութեան գինն է՝ Տարեկան 8 Ֆրանք, եւ Վեցամսեայ՝ 5 Ֆրանք կանխիկ վճարելի: Մէկ Թիւ առանձին՝ կ'ընդունուի 1 Ֆրանքի:

Խմբագրութեան կենդրոնաւայրն է՝ Վիեննա, Միփթարեան Միաքանութեան Մայր վանքը: Սակայն Արեւելքի համար՝ Կ'ընդունին քաժանորդները նաեւ ի Կոստանդնուպոլիս եւ ի Զմիւռնիա նոյն Միաքանութեան վանատուններէն՝ առանց ծամբու ծախուց: Ուրիշ քաղաքներու համար՝ յիշեալ վանատուններէն կը սկսի հաշուիլ մամբու ծախքը:

Վճարմանց դիմաց անմիջապէս Ընկալագիր կամ Անդորրագէտ Կ'ընդունին քաժանորդը նոյն վանատանց Գործակալացը (կամ ի Միաքանութենէ ցուցեալ ուրիշ Գործակալաց) ձեռքէն:

